

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի հուլիսի 28-ին, կիրակի օրը, հոգևոր մխիթարության և ուրախության օր էր Մայր Աթոռում: Հանդիսավոր ս. պատարագի ընթացքում Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի երկու շրջանավարտներ՝ Էդվարդ արկ. Միրզախանյանը և Կամո արկ. Մովսիսյանը կոչվեցին ի սպասավորություն Հայաստանյայց Ս. Եկեղեցու և հավատավոր հայ ժողովրդի:

Նախորդ օրը, հուլիսի 27-ին ըստ Հայ եկեղեցու Ձեռնադրության Մաշտոցի, տեղի ունեցավ բարեշնորհ սարկավագների «Յերեկոյէ կոչումն քահանայութեան» կարգը, ձեռամբ գերշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի և խարտավիլակությամբ հոգեշնորհ Տ. Մամիկոն աբեղա Քիլեճյանի:

Հոգեշնորհ հայր սուրբը վկայեց նորընծաների հոգևոր-իմացական պատրաստվածության և քահանայական ձեռնադրության արժանիքների մասին: Ապա նորընծաները խոստացան «յանձն առնուլ և կատարել զամենայն հրամանս սրբոց առաքելոցն և հայրապետացն և կալ ըստ կանոնաց նոցա», «ամենայն պատրաստութեամբ եւ առանց ձանձրանալոյ կալ ի պաշտօնն Աստուծոյ»:

Հավարտ քահանայական կոչման արարողության նորընծաները հրապարակավ արտասանեցին ս. Գրիգոր Տաթևացու կողմից սահմանված Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու «Հաւատոյ խոստովանութիւն»-ը:

Կիրակի օրը, առավոտյան ժամը 10-ին, Մայր Տաճարում սկսվում է ս. պատարագ: Հանդիսավոր օրվա պատարագիչն է Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը:

Ս. Պատարագը շարունակվում է մինչև «Զի ողորմած և մարդասէր ես Աստուած» աղոթքը, որից հետո խարտավիլակ Տ. Մամիկոն աբեղա Քիլեճյանը բարեշնորհ սարկավագներին, սուրբ սեղանի ձախակողմյան աստի-



Մի պահ ձեռնադրության արարողությունից

ճաններով, ծնրադիր առաջնորդում է ավագ խորան, ուր նորընծաները, դառնալով դեպի ժողովուրդը, ձեռամբարձ հրաժարվում են աշխարհից՝ կոչ-վելու համար «մշակք առանց ամօթոյ»: Հրաժարման պահից և «Աստուա-ծային եւ երկնաւոր շնորհ» հոգեհույզ շարականից հետո նորընծաները ծնր-դադիր մոտենում են ձեռնադրող սրբազան Հորը և նա իր ձեռքը դնելով նրանց գլխին արտասանում է. «Ես դնեմ զձեռս ի վերայ սորա, և դուք ամե-նեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան» աղոթքը: Նորընծաներին շնորհվում է փիլոն, շուրջառ, սաղավարտ կրելու իրավունք: «Խորհուրդ խորին» շարականի սրտառուչ երգեցողության ըն-թացքում փակվում է վարագույրը և նորընծաները զգեստավորվում են:

Սուրբ պատարագը շարունակվում է մինչև «Ողջոյն տուք միմեանց» բարոզը: Ապա ձեռնադրության սրբազան արարողությունը հասնում է իր հոգևոր վերացման բարձունքին. սկսվում է օծման խորհրդավոր պահը: Ձեռնադրող սրբազան հայրը սրբալույս մեռոնով օծում է նորընծաների ճա-կատն ու ձեռքերը և նրանց վերանվանում. Էդվարդ սրկ. Միրզախանյանին՝ Տ. Վազգեն քահանա, Կամո սրկ. Մովսիսյանին՝ Տ. Մովսես քահանա:

Քահանայական օծումն ստանալուց հետո նորընծաները, դառնալով ժո-ղովրդին տալիս են իրենց անդրանիկ օրհնությունը «Խաղաղություն ամե-նեցուն»:

Հավարդ հանդիսավոր ձեռնադրության գերաշնորհ Տ. Ներսես արք-եպիսկոպոս Պոզապալյանը ոգեշունչ քարոզ խոսեց.

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ՝ ԽՈՆՎԱԾ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

(28 հուլիս 1991 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն».

«Աստուածային և երկնաւոր շնորհ, որ միշտ լնու զպէտս սրբոյ ի սպա-սաւորութեան առաքելական եկեղեցւոյ».

«Աստուածային և երկնաւորի շնորհ, որ հոգում է կարիքները առաքե-լական սուրբ եկեղեցու սպասավորների»:

Սիրելի հավատացյալներ, այսօր Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, Աս-տուծո օգնականությամբ, Ամենայն Հայոց Հայրապետի տնօրինությամբ, քա-հանայական ձեռնադրության վսեմ խորհուրդը կատարեցինք Հոգևոր Ճե-մարանից շրջանավարտ Էդվարդ և Կամո բարեշնորհ սարկավագների վրա:

Իրենց կյանքի հասունության տարիքը թևակոխած Էդվարդ և Կամո սարկավագները իրենց հոժար կամքով ուխտ կնքեցին՝ ծառայելու Աստուծո Սուրբ Սեղանին և այդպիսով՝ Հայաստանյայց Եկեղեցուն և հայ ժողովրդին: Ձեռնադրության և Ս. մեռոնի օծման միջոցով նրանք ստացան առաքելա-կան շնորհ՝ քարոզելու, մեղաց թողություն պարգևելու, հիվանդների վրա աղոթելու, մեկ խոսքով՝ աստվածային Բանի մատակարարները դառնալու իրենց կյանքի ընթացքում:

Ս. Օծման պահին Էդվարդ սարկավագը վերանվանեցինք Տ. Վազգեն քահանա և Կամո սարկավագը՝ Տ. Մովսես քահանա: Այսպիսով նրանց մեջ հին մարդը թաղվեց, և Քրիստոսով ծնվեց նոր մարդը Ս. Հոգու միջոցով նրանց մեջ նախկին հողեղեն մեղավոր մարդը դուրս եկավ իր պատյանից,

և նրա փոխարեն այդ պատյանի մեջ եկավ բնակվելու նոր մարդը իր հոգևոր շնորհներով:

Զեռնադրության արարողության ընթացքում ընթերցվեցին մեր եռամեծ հայրապետների և վարդապետների հոգեզմայլ աղոթքներն ու մաղթանքները՝ Ս. Գրիգոր Նարեկացուց, Ս. Ներսես Շնորհալուց, Ս. Գրիգոր Տաթևացուց գնալով մինչև վաղագույն շրջանի հայրերը մեր Եկեղեցու՝ Ս. Սահակ Պարթև և Ս. Մեսրոպ Մաշտոց: Նաև ձեր և մեր, բոլորիս աղոթքներով հայցեցինք, որ Ս. Հոգին, ինչպես Հոգեգալության պահին, նաև այս պահին իջնի մեր թեկնածուների վրա՝ նրանց օժտելով իր առատաբաշխ շնորհներով, վերանորոգելով նրանց էությունը և նրանց դարձնելով ժրաջան սպասավորներ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Սիրելի հավատացյալներ, Հայաստանյայց Եկեղեցին շուրջ հազար յոթը հարյուր տարվա պատմություն ունի, ունի իր հրաշալի և գերազանցապես ազգային արվեստն ու մակույթը, որ ներծծված է քրիստոնեական գաղափարախոսությամբ: Մեր Եկեղեցին հիմնվել է Քրիստոսի զույգ առաքյալներ Ս. Թադևոսի և Ս. Բարթողիմեոսի քարոզությամբ և նահատակությամբ Հայաստանում առաջին դարում, և ապա չորրորդ դարի սկզբին Ս. Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Գ թագավորի ջանքերով քրիստոնեությունը դարձել է պաշտոնական պետական կրոնը Հայաստան աշխարհի և համայն հայության: Մեր Եկեղեցին անքակտելիորեն շաղկապված է հայ կյանքի հետ, նրա պատմությունը միաձուլված է մեր ժողովրդի պատմության հետ նրա և՛ ուրախ, և՛ դառն օրերին: Մեր Եկեղեցին քարեղեն կերտվածք լինելով հանդերձ, է՛ նաև ոգի և թռիչք, հավատք և տեսիլք, կոչում և զոհողություն: Քարը չէ միայն, որ կերտում է Եկեղեցին, այլ՝ Եկեղեցու մեջ ապրող ու շնչող հավատը, նվիրումը: Այս երկուսն են կերտում Եկեղեցին և հավիտենապես կանգուն են պահում այն: Հայ ժողովրդի ողջ պատմության ընթացքում մեր ժողովրդի զավակները լսել են աստվածային կոչման ձայնը և այդ ձայնին անսալով՝ նվիրվել են վեմ իդեալների, իրենց անձը նվիրել են Եկեղեցուն և իրենց կյանքով երկարել Եկեղեցու կյանքը: Տեսե՛ք, ինչպիսի՞ հրաշալի փաղանգ ունենք սրբերի, որոնք հավատով և տեսիլքով անմնացորդ ծառայել են մեր ժողովրդին և Եկեղեցուն: Որքա՞ն մեծ է թիվը մեր նահատակների, որոնք իրենց արյունն են հեղել իրենց հավատի համար և այդպիսով արժանացել հավերժության փառքին: Այսօր մեր Եկեղեցու գոյության համար մենք պարտական ենք բոլոր նրանց, ովքեր հանուն իրենց ազգի և հավատի չեն զլացել գիտակցորեն իրենց թանկ արյունը թափել: Փա՞ռք մեր եռամեծ հայրերին, որոնք իրենց կյանքով լուսավոր հետք թողեցին մեր կյանքում: Այո՛, եղել են նաև դասալիքներ, սակայն դրանց թիվը մեծ չէ, և Եկեղեցու կյանքի փառավոր շքերթին դրանք արգելք չեն կարողացել հանդիսանալ:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին այսօր, ավելի քան երբեք, կենդանի է, ծաղկման և պայծառակերտման ճանապարհի վրա, և հուսով ենք, որ գալիք տարիների ընթացքում նա էլ ավելի կամրանա, կզորանա և կխաղա իր էական փրկարար դերը մեր ժողովրդի կյանքում: Այս օրերին, ինչպես անցյալում, Հայաստան դարձյալ մուտք են գործել մի շարք աղանդներ և աղանդավորներ. պետք է հետևողական պայքար ծավալել նրանց դեմ՝ արգելելու համար նրանց թյուր վարդապետության տարածումը մեր երկրում և հեռու պահելու մեր ժողովրդին շփոթից, մոլորությունից և օտարացումից:

Մեզ համար ձեռնադրության այս օրը ուրախության և հոգևոր ցնծության օր է, որովհետև մեր միաբանության շարքերին են միանում ևս երկու երիտասարդ, նվիրված հոգևոր հայրեր: Նրանք այս երեկո, այս սրբազան կամարների տակ, ուխտ են կատարելու, իբրև կուսակրոն միաբաններ, ծառայելու մեր Եկեղեցուն: Այս առթիվ նրանց գլխին ենք դնելու խորհրդավոր մեկ-մեկ վեղար, իբրև նշան սրբության և նպատակի միության: Այս պահին մեր սիրտը լցված է նոր և հուսատու զգացմունքներով. մենք մեզ զգում ենք առավել գոտեպնդված այն մտածումով, որ նոր սերունդը, հետևելով իր նախորդների օրինակին, բարձր է պահում հավատի ջահը՝ այն փոխանցելու համար հաջորդ սերունդներին:

Այս ուրախ առիթով, սրտագին շնորհավորում ենք Ամենայն Հայոց Վեհափառ Վազգեն Ա. Կաթողիկոսին: Վեհափառի աշխատանքը Հոգևոր Ճեմարանի հարկի տակ և ընդհանրապես հոգևոր կյանքի ասպարեզում անգնահատելի է: Նրա շունչը վստահաբար այս նորապսակ հոգևոր եղբայրներին տվել է տեսիլք և կոչման գիտակցություն:

Հայաստանյայց Եկեղեցին ծնված լինելով հայ ժողովրդի ծոցից իբրև նրա հավատի խորհրդանիշը՝ հավիտենական է: Նորակերտող Սուրբ Հոգին մեր Եկեղեցու ծոցում հրաշքներ է գործում, շնորհազարդում է մեր երիտասարդներին, պարգևում նրանց իդեալ ու տեսիլք և առաջնորդում նրանց դեպի սրբազան ծառայություն: Նույն Սուրբ Հոգին, հուսահատության և վհատության պահերին, մեզ տալիս է կորով ու զորություն, մեզ ոգևորում է, մեզ լցնում է լավատեսությամբ, մեզ գրահում է իր շնորհներով, որպեսզի մեր առաջ դրված արգելքները կարողանանք հաղթահարել: Լույս է Սուրբ Հոգին՝ մեր կյանքի խավարը փարատող:

Սրտանց շնորհավորում եմ նորապսակ մեր հոգևոր եղբայրներին՝ Տ. Վազգեն և Տ. Մովսես հայրերին, նրանց ծնողներին, հարազատներին և սույն արարողության ներկա գտնվող հավատացյալ մեր ժողովրդին: Թող Աստված հաստատ, անսասան և աներեր պահի նորապսակ մեր հոգևոր եղբայրներին իրենց կոչման և հավատի վեմի վրա, որպեսզի լուսավորչյան հավատի կանթեղից նրանք իրենց հերթին ջամբեն հավատի լույսը մեր ժողովրդին երկա՜ր-երկա՜ր տարիներ:

«Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ, ոչ որպես աշխարհս տայ՝ տամ ես ձեզ»: (Հովհ. ԺԴ. 27): Ամէն:

Նույն օրը երեկոյան ժամերգությունից հետո, կատարվեց «Օրհնութիւն աբեղայի» և «Օրհնութիւն վեղարի» կարգի՝ ըստ Ձեռնադրության Մաշտոցի, և Տ. Վազգեն աբեղա Միրզախանյանն ու Տ. Մովսես աբեղա Մովսիսյանը ստացան կուսակրոն քահանայության խորհրդանիշ վեղարը:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորընծա աբեղաներին և հույս հայտնում, որ նրանք կդառնան «Հովիւ քաջ» և խոնարհաբար կպաշտպանեն Հայաստանեայց Ս. Եկեղեցին: